



ՏՈՒՆԸ




Մարդիկ ո՞ւր կը բնակէին շատ ժամանակ առաջ:

Շատ ժամանակ առաջ, մարդիկ կը բնակէին փարայրներու մէջ. անոնք հետզհետէ զարգացան, սկսան փայտն ու քարը գործածել բնակարաններ շինելու համար:




Փայտէ տուն



Քարէ տուն


Մեծ եւ բարձր տուները շէնք կը կոչենք:  
Շէնքերը բազմաթիւ  
յարկեր կ'ունենան:

Ներկէ՛.  
Կապոյտ՝ Յրդ յարկի  
պատշգամբ:  
Դեղին՝ գետնայարկը  
(ամենէն վարի  
յարկը):



Հիմա գիտե՞ս, ո՛ւր կը բնակին մարդիկ. ինչո՞ւ:

Մարդիկ կը բնակին տուներու մէջ. հոն կ'աշխատին, կը սերտեն, հանգիստ կ'ընեն, կը խոսակցանան, իրենց պէտք եղած առարկաները եւ ուտելիքները կը պահեն:



Տան ո՞ր սենեակին մէջ կերակուր կ'եփէ մայրիկը . . . . .:

Ուրիշ ի՞նչ սենեակներ կրնան գտնուիլ տան մը մէջ: